ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2015 թ.-ի ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆ՝ ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

փետրվար, 2016

1. Ներածություն

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հավատարմագրման ազգային մարմինը Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմիններ հավատարմագրող միակ մարմինն է, որը ստեղծվելով ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 19-ի N 890-Ն որոշմամբ, իր գործունեությունը սկսել է 2012թ. դեկտեմբերից: Իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ապահովում է հավատարմագրման գործընթացի իրականացումը, մասնավորապես՝ ընդունում, գրանցում է հավատարմագրման հայտը, իրականացնում է հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (համապատասխանության գնահատման մարմինների, այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացված հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն, համապատասխանության գնահատում՝ ըստ ՀԳՄ-ի գտնվելու վայրի, կազմակերպում է հավատարմագրման խորհրդի, հավատարմագրման տեխնիկական կոմիտեների նիստերը, որի արդյունքում ընդունվում է որոշում ՀԳՄ-ին հավատարմագրելու, հավատարմագրումը մերժելու, հավատարմագրման ոլորտը ընդլայնելու, կրճատելու, հավատարմագրման վկայագրի գործողությունը կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու վերաբերյալ: Կազմակերպում է հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովներ, վերապատրաստման դասընթացներ և շնորհում համապատասխան վկայագրեր, տրամադրում է համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման վկայագրեր, ինչպես նաև վերաձևակերպված

հավատարմագրման վկայագրեր, ապահովում է հավատարմագրված ՀԳՄ-ների պարբերական, արտահերթ գնահատման իրականացումը, ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ու տեխնիկական փորձագետների, ինչպես նաև տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրների ձևավորումը և վարումը, նշված ռեեստրներից տեղեկատվության տրամադրումը, իր իրավասության սահմաններում կնքում է համագործակցության և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման երկկողմանի և բազմակողմ փոխադարձ ճանաչման համաձայնագրեր, հավատարմագրման բնագավառում իրականացնում է նաև այլ գործառույթներ՝ «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված իրավունքներ և պարտականություններ:

Հավատարմագրումը տարածվում է հետևյալ ոլորտների/գործունեությունների վրա

Հավատարմագրումը	Ոլորտը/գործունեությունը	Ստանդարտը
Լաբորատորիաների	Փորձարկման	ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025
	Տրամաչափարկման	ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025
	Բժշկական	ՀՍՏ ԻՍՕ 15189
Սերտիֆիկացման մարմինների	Արտադրանքի	ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065
	Անձանց	ՀՍՏ/ԻՍՕ ԻԷԿ 17024
	Կառավարման համակարգերի	ՀՍՏ/ԻՍՕ ԻԷԿ 17021
Տեխնիկական հսկողու-թյուն իրականացնող մարմնինների	Տեխնիկական հսկողություն	ՀՍՏ/ԻՍՕ ԻԷԿ 17020

2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաշվետու ժամանակշրջանում շարունակվեց ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2020թթ)»-ով սահմանված բարեփոխումների միջոցառումների իրականացումը: Այդ ռազմավարության նպատակն է՝ ապահովել հավատարմագրման ազգային համակարգի զարգացման հեռանկարային ուղղվածությունը և գոյություն ունեցող համակարգը բարեփոխել այնպես, որ այն համապատասխանի միջազգային և եվրոպական պահանջներին:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ ՀԱՄ) տնօրենի 2015 թվականի ապրիլի 1-ի N 5-Ա հրամանով հաստատվեց ՀԱՄ-ի հաստիքացուցակը և կառուցվածքը:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կազմակերպական կառուցվածքը



3. Կառավարման համակարգը

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2010թթ.)» 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշման հիման վրա ՀԱՄ-ում անհրաժեշտ է ներդնել կառավարման համակարգ՝ համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2009 ստանդարտի: վ

ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջներին համապատասխան կառավարման համակարգ ներդնելու նպատակով ՀԱՄ-ը մշակել և ներդրել է կառավարման համակարգի հերևյալ ընթացակարգերը՝ ներառյալ ձևերը.

- Կառավարման ձեռնարկ,
- Անհամապատասխանությունների կառավարման, ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների ընթացակարգ,
- Ներքին աուդիտի անցկացման ընթացակարգ,
- Ղեկավարության կողմից վերլուծության ընթացակարգ,
- Փաստաթղթերի կառավարման ընթացակարգ,
- Գրառումների կառավարման ընթացակարգ,
- Գանգատների քննարկման ընթացակարգ,
- Հավատարմագրման ընդլայնման կամ կրճատման ընթացակարգ,
- Բողոքարկման հանձնաժողովի գործունեության և քողոքարկումների քննարկման կարգ,
- Հավատարմագրման տեխնիկական կոմիտեների գործունեության կարգ,
- Հաշվառման ենթակա բլանկներով ապահովման ընթացակարգ,

- Խիստ հաշվառման ենթակա ձևաթղթերի (բլանկների) տրամադրման և հաշվառման ընթացակարգ,
- Փորձարկման լաբորատորիաների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,
- Սերտիֆիկացման մարմինների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,
- Տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,
- Հավատարմագրման վկայագրի բովանդակությանը և ձևակերպմանը, ինչպես նաև վերաձևակերպմանը ներկայացվող պահանջները,
- Նոր ստանդարտների անցումային շրջան սահմանելու վերաբերյալ քաղաքականություն,
- ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065 ստանդարտի անցումային շրջան սահմանելու վերաբերյալ քաղաքականություն,
- Վերապահումներով հավատարմագրման վերաբերյալ քաղաքականություն,
- Որակի քաղաքականություն,
- Գնահատման խմբի կազմի վերաբերյալ ՀԳՄ-ի կողմից առարկության քաղաքականություն,
- Հավատարմագրման նշանի կիրառման վերաբերյալ քաղաքականություն:

4. Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ուսուցում

Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ուսուցում՝ ԻՍՕ/ԻԷԿ 17000 շարքի ստանդարտների կիրառման ուղղությամբ, համապատասխան տեղեկատվություն հավատարմագրմանը վերաբերող եվրոպական իրավական ակտերի, ինչպես նաև միջազգային և եվրոպական հավատարմագրման համագործակցությունների կողմից ընդունված լրացուցիչ պահանջների վերաբերյալ:

4.1 Ելնելով այն հանգամանքից, որ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը 2016 թվականին նախատեսում է դառնալ Հավատարմագրման միջազգային (ILAC) և տարածաշրջանային (EA) կազմակերպությունների համապատասխանաբար աֆիլացված և ասոցացված անդամ, ապա անհրաժեշտություն է առաջացել ՊՈԱԿ-ի մասնագետների համար անգլերեն լեզվով դասընթացի կազմակերպում, ուսուցում՝ հավատարմագրմանը վերաբերող միջազգային ու տարածաշրջանային պահանջների, ԻՍՕ/ԻԷԿ 17000 շարքի ստանդարտների պահանջների վերաբերյալ:

4.2 ՀԱՄ-ի աշխատակիցները՝

- վերապատրաստման և ուսուցողական այցի նպատակով գործուղվել են Բելառուսի և Ղասախստանի Հանրապետություններ մասնակցելու «Որակի կառավարման համակարգի ներքին աուդիտ՝ համաձայն ISO 9001-2015 միջազգային ստանդարտի պահանջների» թեմայով դասընթացին: Դասընթացի արդյունքում ձեռք են բերվել գիտելիքներ և փորձ՝ կազմակերպությունում ներքին աուդիտը կազմակերպելու և իրականացնելու համար (4 սերտիֆիկատ):

- մասնակցել են Բուդապեշտում կազմակերված Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության աշխատաժողովին, որի ընթացքում քննարկվել են ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի, EA-1/22 «EA-ի ընթացակարգը և չափանիշները EA-ի հավատարմագրման մարմինների կողմից համապատասխա¬նու¬թյան գնահատման սխեմաների գնահատման վերաբերյալ», EA-1/06 «EA-ի բազմակողմ ճանաչման համաձայնագիր. Ստորագրման չափանիշները. Մշակման քաղաքականությունը և ընթացակարգերը», EA-7/04 «ISO 14001:2004 ստանդարտով հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից իրավական նորմերի պահպանումը», EA-2/13 «Անդրսահմանային հավատարմագրման EA-ի քաղաքականությունը և EA անդամ-պետությունների միջև անդրսահմանային համագործակցության ընթացակարգը», «Ասոցացված անդամների անդամակացության չափանիշները» փաստաթղթերի փոփոխությունները:

5. Հավատարմագրման ոլորտին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի մշակում

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկություններ է ներկայացվել հավատարմագրման ոլորտին առնչվող հետևյալ օրենսդրական և իրավական ակտերի մշակման, փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, մասնավորապես՝

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,
- «Հավատարմագրման եվրոպական համագործակցությանը (ՀԵՀ (EA) Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարի մուծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային համագործակցությանը (ԼՀՄՀ (ILAC) Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարի մուծման մասին» որոշման նախագիծ,
- ուսումնասիրվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն կարծիք է ուղարկվել Մաքսային միության հետևյալ տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ՝

ՄՄ ՏԿ 032/2013 Գերճնշմամբ աշխատող սարքավորումների անվտանգության մասին,

ՄՄ ՏԿ 026/2012 Փոքրածավալ նավերի անվտանգության մասին,

ՄՄ ՏԿ 001/2011 Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին,

ՄՄ ՏԿ 002/2011 Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին,

ՄՄ ՏԿ 003/2011 Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների անվտանգության մասին:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացվել են առաջարկություններ 2015թ· հուլիսի 20-ին կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցառումների իրականացման խորհրդատվական կոմիտեին

կից տեխնիկական կարգավորման և համապատասխանության գնահատման Ենթակոմիտեի երկրորդ նիստի № 16-41/որ արձանագրության վերաբերյալ,

- մասնակցել են Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության շրջանակներում կայացած հանդիպմանը ԵԱՏՄ ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացվել են Եվրասիական տնտեսական միության միասնական տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման հարցերը,
- մասնակցել են Մոսկվայում կազմակերպված ԵԱՏՄ պայմանագրի հավելված 10-ի, 9-րդ կետի համաձայն ԵԱՏՄ հանձնաժողովի կողմից մշակված «Միջլաբորատոր համեմատական փորձարկումների իրականացման կազմակերպման կարգ»-ի նախագծի քննարկմանը: Խորհրդակցության արդյունքում ստորագրվել է արձանագրություն,
- ի կատարումն 2014թ. հունվարի 24-ի «ԱՊՀ անդամ երկրների հավատարմագրման ազգային մարմինների համագործակցության մասին» հուշագրի 1-ին կետում նշված դրույթի՝ մասնակցել են Մոսկվայում կազմակերպված հավատարմագրման տարածաշրջանային կազմակերպության ստեղծման հարցերով ՄՊԽ Աշխատանքային խմբի 3-րդ և հավատարմագրման հարցերով գիտատեխնիկական հանձնաժողովի 36-րդ նիստերի աշխատանքներին: Նիստերի աշխատանքների արդյունքում ստորագրվել են արձանագրություններ,
- մասնակցել են Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, որի ընթացքում քննարկվել են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը, համապատասխանության գնահատման սխեմաները և Մաքսային Միության այլ որոշումներ,
- մասնակցել են Մոսկվայում կազմակերպված «Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության հավատարմագրման համակարգերի մոտարկում» ծրագրի շրջանակներում կազմակերպված կոնֆերանսի աշխատանքներին: Կոնֆերանսի ընթացքում փորձի փոխանակման նպատակով անցկացվել են երկկողմ հանդիպումներ ՌԴ-ի հավատարմագրման մարմնի ներկայացուցիչների հետ, քննարկվել են մի շարք հարցեր կապված հավատարմագրման համակարգի և հավատարմագրման գործընթացի

համապատասխանեցմանը միջազգային և տարածաշրջանային պահանջներին: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ քննարկվել են խնդիրներ՝ կապված ՄՄ տեխնիկական կանոնակարգերի շրջանակներում իրականացվող համապատասխանության գնահատման աշխատանքների հետ և առաջարկվել լուծումներ: Կոնֆերանսի ընթացքում քննարկված հարցերը կօգնեն Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման ազգային համակարգի բարեփոխման և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքների երկկողմ և բազմակողմ ճանաչման հարցում:

6. Հավատարմագրման ոլորտի միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի և ուղեցույցների թարգմանություն

Հայերեն թարգմանվել են հավատարմագրման ոլորտի հետևյալ միջազգային փաստաթղթերը և ուղեցույցները

- ILAC P13:10/2010 - ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի կիրառումը որակի ստուգում կատարողների հավատարմագրման համար (Appli¬cation of ISO/IEC 17011 for the Accreditation of Proficiency Testing Providers),
- EA 4/02 M (00) - Տրամաչափարկման ժամանակ չափումների անորոշությունների արտահայտումը (Expressions of the uncertainty of measurements in calibration),
- EA-4/16 G (00) - Քանակական փարձարկումների անորոշությունների արտահայտման EA ուղեցույց (EA guidelines on the expression of uncertainty in quantitative testing),
- EA-2/02 (06) - Բազմակողմանի համաձայնագրի համար EA քաղաքականությունը և ընթացակարգերը (EA policy and procedures for the multilateral agreement),

- EA-1/06 A - AB - EA բազմակողմանի համաձայնագիր (EA Multilateral Agreement),
- EA-1/17 A - EA ընթացակարգերի կանոնները (EA rules of procedures)
- EA-1/17 S1 A -AB (02) – Անդամակացության չափանիշները (Criteria for membership):

7. Հավատարմագրման ծառայություններին և ոլորտին առնչվող հարցերի լուսաբանման և իրազեկման միջոցառումների կազմակերպում

7.1 Համաձայն «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի հավատարմագրման ծառայություններին և ոլորտին առնչվող հարցերի լուսաբանման և իրազեկման միջոցառումների կազմակերպման» ծրագրի, ՀԱՄ-ը կազմակերպել է հանդիպում ՀՀ-ում հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների հետ, որտեղ ներկայացվել են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառվելու վերաբերյալ ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1313-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման մարմիններին և փորձարկման լաբորատորիաներին ներկայացվող պահանջները:

7.2 2015 թվականի ընթացքում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը իր էլեկտրոնային կայքում /www.armnab.am/ պարբերաբար արդիականացրել է հետևյալ տեղեկատվությունը՝

- հավատարմագրման ոլորտին առնչվող օրենսդրական և իրավական ակտերը, հավատարմագրման չափանիշներն ու պահանջները, հավատարմագրման գործընթացին առնչվող փաստաթղթերը, մասնավորապես հայտատուների կողմից հավատարմագրման նպատակով ներկայացվող հայտերի և հավատարմագրման փաստաթղթերի ձևերը, ՀՀ-ում հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների ու սերտիֆիկացման մարմինների ցանկերը և այլն, ՀԱՄ-ի կողմից մշակված ընթացակարգերն ու քաղաքականությունները:

8. ՀԱՄ-ի կողմից գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների կազմակերպում և համապատասխան վկայագրերի տրամադրում

Հավատարմագրման ազգային մարմնի կողմից կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ հետևյալ թեմաներով.

- «Համապատասխանության գնահատում, հավատարմագրման (ԵԱՏՄ) պահանջներ, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի հիմնական պահանջներ» թեմայով վերապատրաստման դասընթաց: Դասընթացին մասնակցել են 13 փորձարկման լաբորատորիաներից ընդհանուր թվով 24 ներկայացուցիչներ և ստացել վկայագրեր:
- «Համապատասխանության գնահատում, հավատարմագրման (ԵՏՄ) պահանջներ, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ստանդարտի հիմնական պահանջները» թեմայով վերապատրաստման դասընթաց: Դասընթացին մասնակցել են 10 արտադրանքի սերտիֆիկացման մարմիններից ընդհանուր թվով 17 ներկայացուցիչներ և ստացել վկայագրեր:

9. Համապատասխանության գնահատման մարմինների (ՀԳՄ) հավատարմագրման գործընթացի կազմակերպում և հավատարմագրում

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման 1-ին կետով հաստատված համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգի՝ իրականացվել են ստորև նշված համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման նպատակով ներկայացված հավատարմագրման գործընթացի կազմակերպման աշխատանքները:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ	ԸՆԴԱՄԵՆԸ
2015 թ.				
Հավատարմագրման հայտեր	4	14	3	21
Հավատարմագրման ընդլայնման հայտեր	2	3	0	5
Հավատարմագրման գործընթացը				
Գնահատման խմբի ձևավորում	6	17	3	26
Փաստաթղթերի փորձաքննություն	6	17	3	26
Լրացուցիչ փաստաթղթերի փորձաքննություն	4	5	1	10
Գնահատում ըստ գործունեության իրականացման վայրի	7	12	3	22
Պարբերական գնահատում	9	25	1	35
Հավատարմագրման դադարեցում	1	1	0	2
Հավատարմագրման վերաբերյալ որոշումը				
Հավատարմագրման վկայագրի տրամադրում	5	15	3	23

10. ՀԱՄ-ի տեղեկատվական տեխնոլոգիաներով ապահովում

Իրականացվել են ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջի և հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, գնահատողների, փորձագետների, համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրների սպասարկման և արդիականացման աշխատանքները, մասնավորապես՝ որոնման համակարգի ստեղծում և ընդլայնում, էլեկտրոնային նամակներ ուղարկելու համակարգի ստեղծում, որը թույլ է տալիս համակարգի միջից ուղղակի ընտրել գրանցված մարմինների էլեկտրոնային հասցեները և նամակը ուղարկել ընտրված մարմիններին և այլ աշխատանքներ:

11. Այլ աշխատանքներ

11.1 Իրականացվել է ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1301-Ն որոշմամբ սահմանված Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձևին համապատասխան՝ համապատասխանության սերտիֆիկատների բլանկների տպագրությունը և տրամադրումը համապատասխանության գնահատման մարմիններին:

11.2 Իրականացվել է հետևյալ փորձարկման լաբորատորիաների և արտադրանքի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1313-Ն որոշումը՝ վերջիններս գրանցվել են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում՝

1) «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ի փորձարկման լաբորատորիա,

2) «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի բուսասանիտարական փորձարկման լաբորատորիա,

3) «Հանրապետական անասնաբուժական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի անասնաբուժական փորձարկման լաբորատորիա,

4) «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի «Էֆ Դի Էյ Լաբ» փորձարկման լաբորատորիա,

5) «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ԼՓԿ Գյումրու տարածքային փորձարկման լաբորատորիա,

6) «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ԼՓԿ էլեկտրատեխնիկական փորձարկման լաբորատորիա,

7) «Ռադիոսկան» ՍՊԸ-ի ռադիոէլեկտրոնային սարքերի փորձարկման լաբորատորիա,

8) «Նարեկ» ԳՀ ՓԲԸ ֆիզիկաքիմիական և մանրէաբանական հետազոտությունների փորձարկման լաբորատորիա,

9) ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիա,

10) «Մավաս գրուպ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիա,

11) «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ ԼՓԿ նավթամթերքի և ֆիզիկաքիմիական փորձարկման լաբորատորիա,

12) ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիա,

13) «ԱԳԱՐԱԿ ՏԵՐՄԻՆԱԼ» ՍՊԸ-Ի «ԱԳ ԼԱԲ» փորձարկման լաբորատորիա

14) «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

15) «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

16) «Ռադիոսկան» ՍՊԸ-ի ռադիոէլեկտրոնային սարքերի արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

17) «ՆԱՐԵԿ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

18) «ՄԱՎԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

19) ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմին:

11.3 Գործարկվել է սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների և Մաքսային միության տեխնիկական կոնոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրները, մասնավորապես ներառվել է՝

1) 716 համապատասխանության հայտարարագիր,

2) 17 համապատասխանության սերտիֆիկատ:

11.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ· մայիսի 21-ի N 552-Ն որոշումը, վարվել է ՀՀ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրը, մասնավորապես ներառվել է՝

1) 648 համապատասխանության հայտարարագիր,

2) 164 համապատասխանության սերտիֆիկատ:

11.5 Հիմք ընդունելով «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ վարվել է հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրը: Ռեեստրում ներառվել են ՝

1) 14 արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

2) 41 փորձարկման լաբորատորիա,

3) 2 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին,

4) 2 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին,

5) 1 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին:

11.6 Մշակվել և ներկայացվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև Որակի ենթակառուցվածքի բարեփոխումների մասով 2016-2018թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) հայտերի, ինչպես նաև 2016 թվականի բյուջետային հայտերի նախագծերը:

11.7 «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան կազմակերպվել են գրասենյակային ապրանքների, վառելիքի, թարգմանչական ծառայությունների գնման գործընթացները:

11.8 «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը հանդիպումներ է ունեցել Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրի (8390-AM) շրջանակներում մի շարք տեխնիկական առաջադրանքներ են (ToR) մշակվել և էկոնոմիկայի նախարարություն ներկայացվել:

11.9 Հաշվետու ժամանակաշրջանում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, պատասխանվել են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից, մի շարք կազմակերպություններից ստացված գրություններին:

12. Գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	11815.9	9726.7
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020		
Ոչ նյութական ակտիվներ	030		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070		
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	11815.9	9726.7
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	991.6	1703.3
Աճեցվող և բտվող կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110	369.4	369.4
Անավարտ արտադրություն	120		
Արտադրանք	130	144.0	33.1
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	86.0	4104.0
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	7985.8	19987.0
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170		42.3
Այլ դեբիտորական պարտքեր	180		
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	19978.4	34981.3
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	29555.2	61220.2
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	41371.1	70946.9

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240		
Էմիսիոն եկամուտ	250		
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	26371.2	62194
Պահուստային կապիտալ	280		
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290		
Ընդամենը սեփական կապիտալ	300	26371.2	62194
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310		
Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	11815.9	2225.7
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	11815.9	2225.7
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ փոխառություններ	380		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390		
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	110.0	850.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	2858.2	3335
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	195.7	160.7
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ	430		2.3
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	440		
Այլ կրեդիտորական պարտքեր	450	20.1	19.2
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460		2160.0
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	3184	6527.2
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	41371.1	70946.9

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	43240.8	65317.7		
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(5053.2)	(12006.2)		
Համախառն շահույթ (վնաս)	030	38187.6	53311.5		
Իրացման ծախսեր	040				
Վարչական ծախսեր	050	(15449.4)	(17488.7)		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	22738.2	35822.8		
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	9734.7	41240.0		
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	9734.7	(41240.0)		
Գործառնական շահույթ (վնաս)	090	22738.2	35822.8		
Ֆինանսական ծախսեր	100				
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130				
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	22738.2	35822.8		
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150				
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	22738.2	35822.8		
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170		0		
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	22738.2	35822.8		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	200				